ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 14/443074 «29» 07 2013 թ.

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ-ի իրավաբան
պրն Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Երևանի քաղաքապետին հասցեագրած Ձեր՝ 24.07.2013թ. հ.205-ի 5 «Տեղեկատվություն ստանալու հարցում»-ի կապակցությամբ ստորև ներկայացվում է պարզաբանումներ՝ բարձրացված հարցերի վերաբերյալ (ըստ հերթականության).

1.Երևանի քաղաքապետի 2013թ. հուլիսի 19-ի «Երևան քաղաքի ներքաղաքային երթուղիները սպասարկող կազմակերպությունների կողմից իրականացվող ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր ուղևորափոխադրումների վարձը վերանայելու մասին» հ.3661-Ա և 2013թ. հուլիսի 19-ի «Երևան քաղաքում տրոլեյբուսով ուղևորափոխադրումների վարձը սահմանելու մասին» հ.3660-Ա որոշումների պատճենները կցվում է: Միաժամանակ հայտնում եմ, որ դրանք տեղադրված են Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

2.Երևանի քաղաքապետի վերոհիշյալ որոշումը անհատական է և որևէ տեղեկագրում չի հրապարակվել:

3-4.Երևանի ներքաղաքային ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիները սպասարկում են ՀՀ կառավարության 16.08.2001թ. հ. 762 որոշմամբ հաստատված կարգով անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպությունները, որոնք իրավաբանական անձինք են և վերը նշված երթուղիներում աշխատող վարորդների գործատու են հանդիսանում, որոնցից էլ Դուք կարող եք ստանալ գրության 3-րդ և 4-րդ կետերով պահանջվող տեղեկատվությունը, իսկ տրոլեյբուսների վարորդների մասով՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ից:

Առդիր՝ 3 թերթ:

Աշխատակազմի տրանսպորտի
վարչության պետ Հ.Նավասարդյան

Հ.Մելքումյան
514 198
Melqumyan 60 Page 32